2019-Ը՝ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԵՎ ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՏԱՐԻ

# ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍԱՆ ՎԱՀԱՆ ՏԵՐ-ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«Մինչ այդ, մեր մամուլի մեջ լույս տեսավ մի հոդված, որտեղ, խոսելով Կոմիտասի մասին, կեղծանվանի հոդվածագիրը եզրակացնում էր. «Երեք ու կես տարում կոշկակարություն սովորել չի կարելի, չէ թե երաժշտություն»:

Էջմիածնի վեղարավոր ագռավների վայրահաչությունը Կոմիտասը չլսելու էր տալիս, բայց արտառոց հիշյալ հոդվածը լուրջ վիշտ պատճառեց նրան, թեեւ ձեւացնում էր՝ իբր հաշվի չի առնում հոդվածագրի խոսքերի պարունակած թույնը:

...Անցան օրեր, շաբաթներ: Մի կիրակի, պատարագից հետո Կոմիտասն ինձ ու Մ.Քրիշչյանին կանչեց իր մոտ՝ լսելու «Ծիրանի ծառ, բար մի տար» ժողովրդական մեներգը, որ նա պատրաստել էր խմբի երգակցությամբ»,- պատմում է Վահան Տեր-Առաքելյանը:

Սեւ սուրճով մեզ հյուրասիրելուց հետո, մենք գործի անցանք, երբ դուռը ծեծեցին: Ներս մտան վիպասան Վրթանես Փափազյանը՝ ձեռքին ջութակ, եւ գիրուկ մի մարդ, որին ներկայացրեց Փափազյանը Կոմիտասի հետ ողջագուրվելուց հետո՝ ասելով.

- Հայ բոշաների բանասեր Գրիգոր Վանցյան:

Վերջինս կարմրեց եւ իր մազոտ աջով ամուր սեղմեց մեր ձեռքը՝ մնալով կանգնած, մի տեսակ շփոթված դրությամբ:

Կոմիտասը եկվորներին եւս սուրճ հյուրասիրեց եւ նրանց խնդրանոք նստեց ֆիզհարմոնիայի (դաշնամուր) դիմաց, սկսեց նվագել ու երգել իր ներդաշնակած ժողովրդական «Լե-լե»-ներից ու եկեղեցական երգերից զանազան կտորներ՝ մեծ հիացմունք պատճառելով նրանց: Ընդհատելով երգն ու նվագը՝ Կոմիտասը դարձավ Փափազյանին.

- Վրթանես ջան, մի բան էլ դու չալիր, ես լսեմ:

- Ուրախությամբ: Հենց այդ նպատակով էլ ես ջութակս բերի հետս, որ նվագեմ քեզ համար քրդական «Լուր-դա-լուրը»: Դա Տաճկաստանում ապրող քրդերի մեջ չափազանց տարածված ու սիրված մի լեգենդ է, որը ես մշակել եմ եւ շուտով հրատարակելու եմ:

Մեր նստած տեղերում մենք դարձանք լարված ուշադրություն:

Կոմիտասը կանգնեց իր բարձր գրասեղանի դիմաց, հյուրերից աննկատ վերցրեց մի թերթ թուղթ, մատիտ եւ, ծնոտը հենած ձախ ձեռքի բռունցքին ու աչքերը հառած Փափազյանին, լսում էր նրա նվագը եւ միաժամանակ հայկական ձայնանիշերով գրի էր առնում «Լուր-դա-լուրը»: Նա աչքը գցում էր թղթին միայն այն պահերին, երբ պետք էր որոշել նոր տողի սկիզբ»:

«Փափազյանը նվագում էր սրտախտիտ, ջերմ զգացումով: Քրդական մեղեդին, օդի մեջ փողփողող երկար ժապավենի պես, մեկ շեշտակի ձգվում էր դեպի վեր, մեկ գլխապտույտ արագությամբ իջնում էր վար, թավահնչյուն մրմնջում, քթքթում եւ ապա նորից սահիկ ոլորտով տարածվում դեպի բարձրերը: Այստեղ «Լուր-դա-լուրը» իրար հետեւից վազող թեթեւ ալիքների շարժումով մղկտաց եւ հուսակտուր ճիչով մեկից ընդհատվեց՝ համակելով մեզ թախծի ու անձկության խորին հույզով:

- Ինչպե՞ս է, Կոմիտաս, հավանեցի՞ր,- հարցրեց Փափազյանը՝ ջութակը վերցնելով կրծքից:

- Հիանալի է: Հավանեցի ու սիրեցի: Այժմ ես նվագեմ, դու լսիր:

Այս ասելով՝ Կոմիտասը վերցրեց իր գրասեղանից թերթը, մոտեցավ ֆիզհարմոնիային, նստեց ու սկսեց նվագել եւ երգել «Լուր-դա-լուրը», որ նա նոր ձայնագրել էր տեղնուտեղը:

Ֆիզհարմոնիայի ծորուն հնչյունները դժվարությամբ էին արտահայտում քրդական մեղեդու արագընթաց տեմպն ու ճկուն ոլորանները, սակայն աներկբա էր, որ եղանակի վերարտադրությունը լիովին ճիշտ էր եւ հարազատ»,- հիացմունքով իր պատմությունն է շարունակում Վահանը:

Մենք ամենքս զարմանքով նայում էինք այդ հմայիչ մարդուն՝ չիմանալով ինչպես արտահայտել մեր հիացմունքը: Փափազյանն ուղղակի ապշել, քարացել էր:

- Կոմիտաս, «Լուր-դա-լուրը» դու առաջուց ձայնագրած ունեի՞ր:

- Ո՛չ, ձայնագրեցի, երբ դու նվագում էիր:

- Չէ՞ որ դուք կանգնած լսում էիք Վրթանեսի նվագը,- բացականչեց Վանցյանը՝ մի տեսակ արտասովոր տարակուսանքով:

- Ի՞նչ կա որ, ականջս լսում էր, ձեռքս՝ գրում: Ահա, տեսեք:

Նա վերցրեց ֆիզհարմոնիայի վրա դրված թերթը եւ ցույց տվեց ծուռումուռ տողերով գրի առնված «Լուր-դա-լուրը»:

- Չէ՛, ջանս, այստեղ մի օյին կա, կամ...

- Կամ ի՞նչ, Փափազ:

- Կամ դու կախարդ ես...

- Բոշ բաներ մի խոսիր, կախարդս ո՞րն է:

- Բայց չէ՞ որ չափազանց դժվար է ձայնագրել քրդական եղանակները, որոնք լեցուն են կոտորակային ձայնամիջոցներով:

- Մի՞թե դու կդժվարանայիր ճշտությամբ գրել քեզ արած հայերեն թելադրությունը, որքան էլ բարդ լիներ այն:

- Հարկավ, ո՛չ: Սակայն մեծ տարբերություն կա թելադրության միջեւ, Կոմիտաս:

- Ինձ համար ոչ մի տարբերություն չկա, ա՜յ վարժապետ Փափազ,- ասաց Կոմիտասը զվարթ քրքիջով:

Փափազյանը, շեղակի, բայց շեշտակի հայացք նետելով Վանցյանի կողմը, ձայնեց.

- Մի՞թե անբարեխիղճ, անամոթ չէ այն մարդը, որ առանց ծանոթանալու Կոմիտասի հետ, առանց գաղափար ունենալու նրա շնորհքի ու ընդունակությունների մասին, հրապարակավ քննադատում է նրան եւ գրում. «Երեք ու կես տարում կոշկակարություն սովորել չի կարելի, չէ թե երաժշտություն»...

- Այդ անամոթ մարդը ես եմ, Կոմիտաս, եւ ներողություն եմ խնդրում իմ անբարեխղճության համար,- թոթովեց Վանցյանը՝ խեցգետնի պես կարմրելով եւ ձեռքերը մեկնելով Կոմիտասին:

Հանկարծակիի եկած Կոմիտասի դեմքը մթագնեց անհաճո զգացումից, բայց վայրկենական այդ մութ ստվերին հաջորդեց լայն ու պայծառ ժպիտը եւ նա, սեղմելով իրեն պարզած ձեռքերը, մանկական անհիշաչարությամբ ասաց.

- Երկու կոպեկ տուր, հոդվածի դառնությունը տանք քամուն:

- Հայր սուրբ ջան, երկու էլ, տասներկու էլ կտամ, միայն ներեք ինձ...

- Ո՛չ, ճիշտ երկու կոպեկ:

Մի քանի տարվա ընթացքում այդպես հավաքած երկու կոպեկներով Կոմիտասը Փարիզում հրատարակեց «Հայ քնար» գեղջուկ երգերի իր առաջին ժողովածուն»:

***Պատրաստեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***


ᲛᲐᲒᲗᲘ MAGTI



ՈՂՋ ԱՄԱՌ ԱՊՐԻՐ ՄԱԳԹԻԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

**Օպտիկական համացանցի կրկնապատկված արագություն**

Նվերի ակտիվացման համար զանգահարեք **0800100202** հեռախոսահամարով և առանց լրացուցիչ մուծման ստացեք օպտիկական-մանրաթելային համացանցի կրկնապատկված արագություն

*Մագթիի նվերը*

Առավելագույն կրկնապատկված արագությունը 100մբ/վրկ


ԴՊՐՈՑ

# ՀԱՅՈՑ ԵՐԳԻ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ



*2019 թվականը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հայտարարվել է Հովհաննես Թումանյանի եւ Կոմիտասի տարի: Այդ հոբելյանները նշվում են ամբողջ աշխարհում:*

*Հայ ազգային դասական երաժշտության հիմնադիր Կոմիտասի ծննդյան 150-ամյակին նվիրված միջոցառում անցկացվեց Նինոծմինդայի մունիցիպալիտետի Փոքր Խանչալիի հանրային դպրոցում՝ «Հայոց երգի Մեսրոպ Մաշտոցը» խորագրով: Միջոցառումը կազմակերպել էր հայոց լեզվի եւ գրականության վաստակաշատ ուսուցչուհի Լարիսա Մահտեսյանը: Միջոցառմանը մասնակցում էին 9-րդ դասարանի աշակերտներ: Աշակերտները հանդիսատեսին ներկայացրեցին Կոմիտաս վարդապետի կյանքն ու գործունեությունը: Միջոցառումը համեմված էր գեղեցիկ խոսքով, կոմիտասյան երգերով ու ազգագրական պարերով:*

Բոլորը նկատեցին, որ աշակերտներն առանձնակի սիրով ու ոգեւորվածությամբ էին պատրաստվել այդ միջոցառմանը: Նրանք իրենց գեղեցիկ հայերենով, հիանալի ձայնային ու պարային տվյալներով մեծ տպավորություն թողեցին իրենց ուսուցիչների եւ հանդիսատեսի վրա: Վաստակաշատ ուսուցչուհու տքնաջան աշխատանքի ու երեխաների շնորհիվ, այդ օրը Փոքր Խանչալիի հանրային դպրոցի ուսուցչական աշխատակազմի, այլ դասարանի աշակերտների ու գյուղի հասարակության համար իիրավի տոնական էր:

Հավարտ միջոցառմանը ելույթ ունեցավ դպրոցի տնօրեն Համլետ Մահտեսյանը: Նա կարեւորեց Կոմիտաս մարդու, աշխարահռչակ հայի, երաժշտի դերը մեր մանուկների դաստիարակության գործում եւ տիկին Լարիսային մաղթեց երկար տարիների բեղուն աշխատանքային գործունեություն, աշակերտներին՝ միայն ու միայն բարձունքներ, փայլուն ապագա:

Բացելով միջոցառումը, Լարիսա Մահտեսյանը, մասնավորապես, նշեց. «...Նա աշխարհով մեկ ապացուցեց, որ հայ ժողովուրդը մյուս քաղաքակիրթ ժողովուրդների նման ունի իր ազգային երաժշտությունը: Կոմիտասը մաքրագործեց հայ ժողովրդական երգը, դեն շպրտեց օտար խառնուրդը, դարձրեց բյուրեղի պես մաքուր, աղբյուրի պես զուլալ»:

Այո՛, բացառիկ մեծ է Կոմիտասի դերը հայ ազգային երաժշտության ինքնության հաստատման գործում: Նա իսկապես Հայոց երգի Մեսրոպ Մաշտոցն է:

***ԱՐՄԵՆՈՒՀԻ ՊՈՂՈՍՅԱՆ***
***Իլիայի անվան պետհամալսարանի երկրորդ կուրսի ուսանողուհի***

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

## ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

*Հեփաքրքիր է իմանալ, մշակվե՞լ է, արդյոք, հաջող լինելու բանաձեւը: Եթե՝ այո, ապա, ինչպիսի՞ն է այն:*

*Ա.Վարդանյան*
*Դեդոփլիսծղարո*



Որքան էլ տարօրինակ լինի, նման բանաձեւ, կարելի է ասել, մշակել են: Ստորեւ ներկայացնում ենք այն տասը խորհուրդները, որոնց հանգել են գիտնականները:

**1.** Զարգացրու քո մեջ աշխատանքիդ հանդեպ սիրո տրամադրություն, չմոռանալով, որ դա քո ընտրությունն է:

**2.** Փորձություններին պատրաստվիր մտովի եւ ֆիզիկապես: Կարողացիր լինել առողջ թե' հոգով եւ թե' մարմնով: Չե՞ս կարողանում՝ սովորիր:

**3.** Հաճույք ստացիր նոր կարգավիճակում քեզ սպասվող փորձություններից:

**4.** Եղիր միշտ դրականորեն տրամադրված: Մի' վախեցիր բարդ խնդիրներից: Սթրեսը՝ անինքնավստահության արդյունք է: Այդ պատճառով հավատա եւ վստահիր ինքդ քեզ:

**5.** Յուրաքանչյուր իրավիճակում կարելի է տարալուծվել նրանում՝ ինչ անում ես տվյալ պահին: Մի' ապրիր անցյալով, եւ մի' անհանգստացիր ապագայի համար այսօր՝ դա հավասարազոր է պարտությանը: Ապրի'ր ներկայում:

**6.** Միտքը նյութական է: Ղեկավարիր մտքերդ: Եթե մտքերդ հանգիստ են, ապա մարմինդ նույնպես սեղմված չի լինի: Հիշո՞ւմ ես, որտեղից էին առաջանում հիվանդությունները: Եվ հակառակը՝ մկանային լարվածությունը վկայում է հոգեբանական կոնֆլիկտի մասին: Պատճառները փնտրիր քո մտքերում, բաց թող իրավիճակը:

**7.** Եթե չես կարող փոխել իրավիճակը՝ փոխիր վերաբերմունքդ դեպի այդ իրավիճակը: Մենք միշտ տեսնում ենք իրավիճակն այնպես, ինչպես ունակ ենք տեսնել: Զբաղվիր ինքնազարգացմամբ, ինքնակրթությամբ, լայնացրու հայացքներդ:

**8.** Կենտրոնացիր նրա վրա, ինչը կարող ես վերահսկել, եւ ձերբազատվել նրանից, ինչ վեր է ուժերիցդ: Կարողացիր ժամանակին կանգ առնել, որպեսզի ուժ հավաքես եւ հաղթահարես ավելի բարձր նշաձող:

**9.** Պարտություն կրելով՝ այն ընկալիր որպես փորձ: Սեփական սխալները հասկանալը՝ հետագայում տանում է դեպի հաղթանակ: Անհաջողակի նման մի' հանձնվիր եւ մի' հանգստացիր:

**10.** Կարեւորը՝ հաճույք ստացիր յուրաքանչյուր գործընթացից, ինչով էլ որ զբաղվես՝ սպորտով, դասերով, բիզնեսով, ընտանիքով... Եվ այդժամ հաջողությունը քեզ կուղեկցի:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

## Ո՞ՐՆ Է ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԵՐԳԸ



***24/7 Wall Stree ֆինանսական պորտալը կազմել է բոլոր ժամանակների հարյուր լավագույն երգերի վարկանիշը: Ցուցակը մայիսի 30-ին ներկայացրել է 24/7 Wall Stree-ն: Ցուցակը կազմելիս՝ հաշվի են առնվել կոմպոզիցիաների վաճառքները, Billboard հիթ-շքերթներում հայտնվելը, երգի քավերների քանակը եւ նրա ժողովրդականությունը մելոմանների շրջանում:***

Մարդկության պատմության մեջ լավագույն կոմպոզիցիան դարձել է բրիտանական The Beatles խմբի Yesterday երգը, որը թողարկվել է 1965 թվականին: Ձայնագրել են դրա 665 քավեր: Billboard Hot 100 հիթ-շքերթում կոմպոզիցիան պահպանվել է 11 շաբաթ: Yesterday-ը, որի հեղինակը Պոլ Մաքքարթնին է, տեղ է գտել Եվրոպայի Help! ալբոմում, իսկ ԱՄՆ-ում թողարկվել է սինգլի տեսքով: Երկրորդ հորիզոնականը զբաղեցրել է Simon & Garfunkel դուետի Bridge Over Troubled Water կոմպոզիցիան, որը թողարկվել է 1970 թվականին: Ձայնագրել են դրա 400-ից ավելի քավերներ եւ այն Billboard Hot 100-ում մնացել է 14 շաբաթ: Երրորդ տեղը գրավել է բրիտանացի երգչուհի Ադելի՝ 2010 թվականի Rolling In the Deep կոմպոզիցիան: Երգը հիթ-շքերթում գտնվել է 65 շաբաթ եւ ստացել 84 քավեր: Թոփ-10-ում հայտնվել են նաեւ The Beatles-ի Hey Jude, ամերիկացի երգիչ Ջոն Լեջենդի All of Me, երգչուհի Լեդի Գագայի Bad Romance, The Queen կոլեկտիվի Bohemian Rhapsody, The Beatles-ի Let It Be եւ Բիլ Ուիզերսի Ain’t No Sunshine երգերը: Ընդամենը վարկանիշը բաղկացած է հարյուր կոմպոզիցիայից, որոնց թվում նշվել են Էլվիս Փրեսլիի Can’t Help Falling In Love-ը (11-րդ տեղ), Ֆարել Ուիլյամսի Happy-ն (14-րդ տեղ), Նենսի Սինատրայի These Boots Are Made For Walkin-ը (21-րդ տեղ), Survivor խմբի Eye of the Tiger-ը (25-րդ տեղ) եւ ռեփեր Էմինեմի Lose Yourself-ը (27-րդ տեղ): Թոփային կոմպոզիցիաների թվով առաջատար է դարձել The Beatles խումբը:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Ամառային դեպրեսիա - Սա սեզոնային էֆեկտիվ խանգարում է, որը հաճախ հայտնաբերվել է էկոտորին մոտ գտնվող երկրներում: Չնայած այն հանգամանքին, որ ամառը ծաղիկների, արձակուրդների, հետաքրքրաշարժ ճամփորդությունների ժամանակ է, այդ ժամանակահատվածում կարող են զարգանալ դեպրեսիվ խանգարումներ: Փորձագետները դժվարանում են նշել դրա պատճառները որոշակիորեն եւ հավակնում են հավատալ, որ դրանք կապված են օդում խոնավության մակարդակի եւ ջերմության հետ:*

*Ամառային դեպրեսիան, ըստ հետազոտող գիտնականների, հատուկ տեղ է զբաղեցնում սեզոնային ազդակային պետությունների շրջանում: Նրա հիմնական տարբերությունը, աշնանային եւ ձմեռային դեպրեսիաների մեծացումը, առաջացնում է նյարդայնություն:*

## ԱՄԱՌԱՅԻՆ ԴԵՊՐԵՍԻԱ



**Ամառային դեպրեսիայի պատճառները**

Գիտնականները պարզել են, որ շատ երկրներում հենց ամռանն են զգում ճնշված տրամադրություն, եւ այլ ոչ՝ ձմռանը:

Որոշ դեպքերում դեպրեսիվ խանգարումների վերադարձը կապված է անցյալ տարվա բացասական փորձի հետ: Հնարավոր է, անցյալում, ամռանը, տեղի ունեցավ տխուր իրադարձություն, որն առաջացրեց հոգեբանական նման վիճակ: Այս դեպքերում դեպրեսիվ խանգարումը կօգնի վերացնել թերապեւտը: Սակայն, սեզոնային անկման պատճառները կարող են լինել մի շարք այլ գործոններ, որոնք կապված չեն մտավոր առողջության հետ:

Այս խանգարման պատճառը սովորական կյանքի ձեւի խախտում է, քանի որ տոների սկիզբը ամբողջ ընտանիքը փոխվում է: Իրավիճակը շատ բարդ է նրանով, որ եթե ընտանիքում դպրոցականներ լինեն, նրանք ամբողջ օրվա ընթացքում անտարբեր են մնացել: Այս խնդրի լուծումը հանգեցնում է նյարդային լարվածության բարձրացման հետ:

Անհանգստությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ջերմության եւ բարձր խոնավության ընթացքում մարդը մշտապես սթրեսի է ենթարկվում: Ստեղծված երկարատեւ ջերմությունը առաջացնում է բացասական ջերմային սենսացիա, ինչը հանգեցնում է մարմնի գերտաքացմանը: Հետեւաբար, կարեւոր է սովորել՝ ճանաչել մարմնի ջրազրկման եւ ջերմության նշանները: Այս պայմանի առաջին նշանները ներառում են գլխացավ, ընդհանուր թուլություն, անտարբերություն, գլխապտույտ, սրտխառնոց, ախորժակի կորուստ, անքնություն, փսխում եւ վարժության դժվարություն:

Ամառային դեպրեսիան շատ դեպքերում ենթադրում է կենսաբանական պատճառներ, սակայն կան դեպքեր, երբ անկարգությունը տեղի է ունենում ամռանը տեղի ունեցած որոշակի սթրեսի հետեւանքով: Ամենից շատ, ամռանը դեպրեսիան խորացնում է մարդու այն տրամադրվածությունը, որ պետք է լավ ժամանակ անցկացնի: Ի վերջո, ամառ է, երբ բոլորը երջանիկ են, հանգիստ, լողում են ծովում, գետի մեջ կամ լողավազանում:

Հետեւյալ գործոնները նույնպես ազդում են ամառային դեպրեսիայի զարգացման վրա.

- ամառային արձակուրդ, որը խախտում է սննդի եւ քնի սովորական ժամանակացույցը.

- օդի ջերմաստիճանի բարձրացումը եւ պակաս հագուստ կրելու ցանկությունը տանում է դեպի հաջորդ խնդիր, դժգոհություն տեսքից: Ամոթի զգացողության պատճառով, որը ծագում է դժգոհության պատճառով, մարդը հաճախ հրաժարվում է շորտեր կամ լողազգեստներ հագնելուց եւ թույլ չի տալիս ինքնուրույն ժամանակ անցկացնել ջրամբարների մոտ:

- ամառային ժամանակաշրջանը բերում է շատ ֆինանսական ծախսեր, ինչը նույնպես նպաստում է դեպրեսիային:

*(Շարունակելի)*

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

## ՊԼԱՍՏՄԱՍԵ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ՝ ԱՐԳԵԼՔԻ ՏԱԿ



***Եվրամիության խորհուրդը հաստատել է դիրեկտիվ, որն արգելում է որոշակի պլաստմասե արտադրանքի օգտագործումը:***

«Եվրամիության խորհրդի կողմից նոր կարգի ֆորմալ ընդունումը գործընթացի եզրափակիչ քայլն է»,- նշված է Եվրամիության խորհրդի պաշտոնական կայքէջում հրապարակված հայտարարության մեջ: Մինչ այդ նշված դիրեկտիվը Եվրախորհրդարանը հաստատել էր 560 ձայնով:

Նոր կարգի համաձայն, 2021 թվականից Եվրամիության տարածքում արգելվելու է պլաստմասե բաժակների, հյութ խմելու խողովակների, պլաստմասե ամանների եւ այլ արտադրանքի օգտագործումը: Դրա հետ մեկտեղ, պետությունները պայմանավորվել են, որ 2029 թվականի համար երկրորդական մշակման համար պլաստմասե շշերի հավաքելու ցուցանիշը հասնելու է 90 տոկոսի:

Եվրահանձնաժողովի տվյալներով, նոր դիրեկտիվի շրջանակներում, արգելված պլաստմասե առարկաները կազմում են օվկիանոսում գոյություն ունեցող մնացորդների 70 տոկոսը:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



☞ Հիմարին խորհուրդներ տալն անօգուտ է: Դա միայն նրան զայրացնում է:

☞ Ուրիշների համար ապրող մարդու համար անգամ շատ կարճ կյանքը երջանկությամբ է լցված:

☞ Չմխիթարվածը մխիթարվում է անցածով, թուլամիտը՝ ապագայով, խելացին՝ ներկայով:

☞ Երջանկությունն ինքն է ճանապարհ գտնում դեպի հոգով ուժեղը:

☞ Գլուխդ մի գովիր ճանապարհ գնալիս, այլ դա արա հետադարձիդ ճանապարհին:

☞ Կանայք գիտնական են բնությունից, իսկ տղամարդիկ՝ գրքերից:

☞ Ինքդ քեզ հաղթելն անպարտելի լինելու լավագույն եղանակն է:

☞ Ուրախությամբ է լցված աշխարհը բոլոր նրանց համար, ովքեր բոլորին առանց թշնամանքի ու նախապաշարմունքների են նայում:

☞ Մռա՞յլ է կինը, ուրեմն ողջ տունը թաղված է խավարի մեջ:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

*Հունիսի 6-7-ը, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, աշխատանքային այցով, գտնվում էր Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգ քաղաքում՝ մասնակցելու Սանկտ Պետերբուրգի միջազգային տնտեսական համաժողովին:*



Այցի շրջանակներում՝ Նիկոլ Փաշինյանը հանդիպումներ ունեցավ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի, համաժողովին մասնակից այլ երկրների ղեկավարների, կառավարությունների ներկայացուցիչների եւ միջազգային կազմակերպությունների ղեկավարների հետ: Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ նաեւ Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Պետերբուրգում, Հայաստանի վարչապետի եւ Ռուսաստանի նախագահի հանդիպմանը, քննարկվեցին տնտեսական համագործակցության եւ Ղարաբաղի հակամարտություն հետ կապված հարցեր:

Հանդիպմանը նշվեց, որ Ռուսաստանը Հայաստանի առաջատար առեւտրատնտեսական գործընկերն է, ունի երկու միլիարդ ուղղակի ներդրումներ, որը երկկողմ հարաբերություններում դրսեւորում է առանձնահատուկ դաշնակցային բնույթը: Երեւանի եւ Մոսկվայի միջեւ ռազմավարական դաշնակցային հարաբերություններ են, որոնք կապված են ոչ միայն երկկողմ կապերի, այլեւ Եվրասիայի տնտեսական միության, անկախ պետությունների համադաշնության եւ կոլեկտիվ անվտանգության համաձայնության կազմակերպության շրջանակներում համագործակցության հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին նաեւ Ղարաբաղի հակամարտության հետ կապված հարցեր:

## ԸՆԴԳԾՎԵՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ



*Հունիսի 5-ին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը հանդիպում ունեցավ Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) փոխնախագահ Չեն Շիխինի գլխավորած պատվիրակության հետ:*

Հանդիպմանը Արմեն Սարգսյանը գոհունակությամբ փաստեց, որ Հայաստանը եւ Ասիական զարգացման բանկը լավ գործընկերներ են. բանկի ակտիվ մասնակցությամբ, նախորդ տարիների ընթացքում, հանրային եւ մասնավոր սեկտորներում կենսական նշանակություն ունեցող բազմաթիվ ծրագրեր են իրականացվել: Նրա խոսքով, նախագահական նախաձեռնությունների շրջանակում, մտադիր են ձեռնարկել երկրի ապագային ուղղված մի շարք ծրագրեր, որոնց նպատակն է՝ խթանել կրթության, գիտության, նոր տեխնոլոգիաների, արհեստական բանականության զարգացումը: Զրուցակիցները մտքեր փոխանակեցին այս ծրագրերի իրականացմանը՝ Ասիական զարգացման բանկի հնարավոր մասնակցության մասին:

## ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ՝ ԸՍՏ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

*Հունիսի 1-ին, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը ստորագրեց կառավարության կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ձեւավորված նոր նախարարությունների նախարարներ նշանակելու մասին հրամանագրերը:*

Ըստ նախագահի հրամանագրի՝ Էրիկ Գրիգորյանն ազատվել է բնապահպանության նախարարի պաշտոնից ու նշանակվել շրջակա միջավայրի նախարար, Տիգրան Խաչատրյանը նշանակվել է Հայաստանի էկոնոմիկայի նախարար՝ ազատվելով տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարի պաշտոնից, Արայիկ Հարությունյանը նշանակվել է կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար՝ ազատվելով կրթության եւ գիտության նախարարի պաշտոնից, Սուրեն Պապիկյանը նշանակվել է տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար՝ ազատվելով տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի պաշտոնից, Հակոբ Արշակյանը նշանակվել է բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար՝ ազատվելով տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի պաշտոնից:

Օրենսդրական փոփոխություններից հետո Հայաստանի կառավարությունը 17-ի փոխարեն, բաղկացած է 12 նախարարություններից:

## ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի կառավարությունը Հարկային օրենսգրքի փոփոխությունների փաթեթով առաջարկում է հինգաստիճան հարկային համակարգի փոխարեն, ունենալ երեքը:*

Ինչպես նշված է կառավարության ներկայացրած բացատրական տոմսակում, ներկայումս գործում են փոքր եւ միջին ձեռնարկատիրության համար նախատեսված 3, երբեմն նաեւ 4 համակարգեր՝ ինքնագբաղ անձանց հարկային համակարգ, ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտների հարկման համակարգ, շրջանառության հարկի համակարգ, արտոնագրային եւ ավելացված արժեքի հարկ վճարողների հարկային համակարգեր: Հետեւաբար, առաջարկվել է էականորեն պարզեցնել այս բազմազանությունը: Ինքնազբաղ անձանց հարկման համակարգի եւ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտների հարկման համակարգի փոխարեն, կներդրվի մեկ միասնական միկրոձեռնարկատիրության հարկման համակարգ, ընդ որում՝ ընդլայնելով միկրոձեռնարկատիրության միջավայրը:

Ինքնազբաղ անձանց հարկման համակարգի առավելագույն շեմը 9 մլն դրամ է, իսկ ընտանեկան ձեռնարկատիրության հարկման համակարգինը՝ 18 մլն դրամ: Միկրոձեռնարկատիրության համար առաջարկվում է 24 մլն դրամ իրացման շրջանառության շեմ:

## ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ

*Երեւանի Եզնիկ Կողբացի 42/3 հասցեում բացվեց հայ երաժշտության զարգացման եւ պահպանման նվիրյալ, սոպրանո, ծնունդով Ախալցիխեից Լուսինե Զաքարյանի տուն-թանգարանը, որտեղ ներկայացված են Զաքարյանի եւ նրա ամուսնու՝ բանասեր, շարականագետ, մանկավարժ, ծիսագետ եւ երգիչ Խորեն Պալյանի անձնական իրերը, փաստաթղթերն ու նոտաները, նամակներ, գրադարանը եւ այլ ցուցանմուշներ: Տուն-թանգարանի բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ երգչուհու ծննդյան օրը՝ հունիսի 1-ին: Այդ օրը նա կդառնար 82 տարեկան (վախճանվել է Երեւանում, 1992 թվականի դեկտեմբերին):*



Պալյան ընտանիքի նախաձեռնությամբ՝ 2016 թվականին սկսվել են հայ անվանի արվեստագետներ Լուսինե Զաքարյանի եւ Խորեն Պալյանի տուն-թանգարանի ստեղծման աշխատանքները: Այն բնակարանը, որտեղ արվեստագետներն ապրել են, 1968-2007 թվականներին տուն-թանգարանի վերածելու Խորեն Պալյանի ցանկությունը իրագործել է նրա եղբորորդի, բժիշկ Րաֆֆի Պալյանը, ում ֆինանսավորմամբ 2018 թվականին իրականացվել են վերանորոգման աշխատանքները: 2019-ին Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ կաթողիկոսի ֆինանսական աջակցությամբ սկսվել են տուն-թանգարանի ցուցադրական աշխատանքները: Թանգարանի հավաքածուի համալրման, հաշվառման, վերականգնման, թվայնացման եւ այլ աշխատանքներում աջակցություն են ցուցաբերել Կոմիտասի թանգարան-ինստիտուտը, Չարենցի անվան գրականության եւ արվեստի, Հայաստանի պատմության թանգարանները, Հայաստանի ազգային արխիվը, Հայաստանի հանրային հեռուստատեսությունը եւ ճարտարապետության ու շինարարության Հայաստանի ազգային համալսարանը:

### ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ ԿՂԶՈՒՄ

*Հունիսի 3-ին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, երկօրյա արշակուրդի շրջանակներում, տիկնոջ՝ Նունե Սարգսյանի հետ այցելել Սուրբ Ղազար կղզի: Նշենք, որ Սուրբ Ղազար կղզին գտնվում է Վենետիկի ծոցի մերձավոր ջրերում՝ հյուսիսային Իտալիայում՝ Լիդո կղզույ անմիջապես դեպի արեւմուտք: Այն պատկանում է Մխիթարյան միաբանությանը, այդ միաբանության մայրավանքն է: Կղզին հիմնադրվել է տասներկուերորդ դարում: 1717 թվականին Վենետիկի իշխող խորհրդի կողմից այն տրվել է մի խումբ հայ վարդապետների: Մխիթարը եւ նրա տասնյոթ վարդապետները կառուցել են վանքը, վերականգնել հին եկեղեցին եւ ընդլայնել կղզին:*

### ԼՐԱՑՈՒՑԻՉ 25 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ

*Եվրամիությունը, նախորդ տարիների համեմատ, ավելացրել է Հայաստանին տրվող աջակցության չափը: Բացի այդ, 2019-ի համար նախատեսել է 25 մլն եվրոյի չափով լրացուցիչ աջակցություն:*

*Ինչպես նշել Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը, Եվրամիության հետ հարաբերությունների դրական դինամիկայի արտահայտություններից էր այն, որ 2019-ի համար ԵՄ-ի տարեկան գործողությունների ծրագրի ներքո առաջարկությունների ամփոփման ընթացքում են Հայաստանի համար նոր տեխնիկական աջակցության ծրագրերը: 2019-ի համար Եվրամիության կողմից նախատեսված է 40 մլն եվրոյի չափով աջակցություն, որին ավելացվում է լրացուցիչ 25 մլն եվրոյի ֆոնդ: Ընդհանուր 65 մլն եվրոյի չափով աջակցություն ենք ունենալու ԵՄ-ի կողմից, ինչը կտրականապես աճել է 2018-ի եւ առավել եւս՝ 2017-ի համեմատ:*

### ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

*Հայաստանում ավելացել են վարկավորման ծավալները: Դա նաեւ տնտեսական ներուժի զարգացման կարեւոր բաղադրիչ է:*

*Հայաստանի կենտրոնական բանկի տվյալներով, վերջին 11 տարիներին 4 անգամ աճել է ֆինանսական միջնորդությունը, ավելացել են վարկավորման ծավալները, որը տնտեսական ներուժի զարգացման կարեւոր բաղադրիչ է, եթե, իհարկե, դրանք ուղղվում են արտադրական ճյուղերին: Վերջին 10 տարիների ընթացքում վարկերի միջին աճը կազմել է 24 տոկոս, իսկ ավանդներինը՝ 20 տոկոս:*

*Ներկայում ԿԲ-ի կողմից կառավարության հետ համատեղ աշխատանքներ են տարվում աճի ներուժ ունեցող պետական մասնակցությամբ ընկերությունների մասնավորեցման ուղղությամբ՝ ֆոնդային բորսայում հրապարակային առաջարկի միջոցով: Աշխատանքներ են տարվում նաեւ խոշոր մասնավոր ընկերություններին կապիտալի շուկա ներգրավելու ուղղությամբ: Արդեն բանակցությունները են սկսվել կառավարության ներկայացուցիչների հետ:*

### ԴՊՐՈՑԻ ՄՈՒՏՔԸ՝ ԱՆՑԱՔԱՐՏԵՐՈՎ

*Երեւանի 30 դպրոցներում առաջիկա սեպտեմբերից կմեկնարկի պիլոտային անվճար ծրագիր՝ մուտքը տվյալ դպրոցներ կլինի անցաքարտերով: Դրա համար ընտրվել են ամենախիտ դպրոցները: Նպատակը անվտանգության ապահովումն է:*

*Ծրագիրը կունենա հավելյալ ծառայություններ, որոնք կլինեն վճարովի: Ըստ ցանկության՝ ծնողը, օրինակ, կարող է հաղորդագրություն ստանալ երեխայի դպրոց մուտքի եւ ելքի մասին:*

CyanMagentaYellowBlack



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈՒՆԻՍ

*9.06.2019. Հոգեգալուստ (Պենտեկոստե)*



Սուրբ Հարության հիսուներորդ օրը Հայ Առաքելական եկեղեցին տոնախմբում է Սուրբ Հոգու էջքն առաքյալների վրա: Սուրբ Հոգին Սուրբ Երրորդության երեք անձերից մեկն է, համագոր եւ հավասար Հորը եւ Որդուն: Քրիստոնեական եկեղեցում շնորհի վարդապետությունը կապված է Սուրբ Հոգու հետ:

Երկուշաբթիից սկսվում է եղիական պահքը: Հայ Առաքելական եկեղեցու սահմանած՝ տարվա չորս եղանակների պահքերից սա ամառնամուտի շաբաթապահքն է:

Ամառվա այս պահքը սկսվում է Հոգեգալստյան կիրակիի հաջորդ օրը (պահքի բարեկենդանը Հոգեգալստյան կիրակին է): Զատկի օրվա փոփոխման հետ պահքի սկիզբը կարող է փոփոխվել մայիսի 11-ից մինչեւ հունիսի 14-ն ընկած ժամանակահատվածում: Մյուս եղանակների պահքերի նման, այս պահքը եւս տեւում է 5 օր՝ երկուշաբթիից մինչեւ ուրբաթ:

## ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑ ԹԲԻԼԻՍԻ



*Մայիսի 28-30-ը Թբիլիսիում էին գտնվում Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության գործադիր տնօրեն Զավեն Խանջյանը տիկնոջ՝ Սոնա Խանջյանի հետ եւ Եվրասիայի Հայ Ավետարանական եկեղեցիների միության նախագահ, Վերապատվելի դոկտոր Ռենե Լեւոնյանը:*

Հյուրերը, Թբիլիսիի Հայ Ավետարանական եկեղեցու հովիվ, վերապատվելի Կարեն Խաչատրյանի ուղեկցությամբ, այցելեցին Թբիլիսիի Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցի, հանդիպում ունեցան թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հետ:

Ավետարանական եկեղեցու ներկայացուցիչներն այցելեցին նաեւ Խոջիվանքի Հայ գրողների եւ հասարակական գործիչների պանթեոն, հարգանքի տուրք մատուցեցին այնտեղ հանգչող մեծերին: Այնուհետեւ՝ եղան նաեւ «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում, ծանոթացան ներկայացվող ցուցանմուշներին:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՆԱՉՎԱԾ ԴԱՇՆԱԿԱՀԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒՄ



*Հարազատ քաղաք իր հերթական այցելության օրերին, տաղանդավոր դաշնակահար, միջազգային բազում մրցույթների դափնեկիր Մամիկոն Նահապետովը հարգանքի տուրք մատուցեց Մեծն Իոհան Սեբաստիան Բախին:*

Հունիսի 4-ին նահանջելով Թբիլիսիի Կախիձեի կենտրոնում, նա ներկայացրեց «Գոլբերգի թեմայով արիա եւ 30 վարիացիաներ» երաժշտաշարը: Ինչպես միշտ, դաշնակահարը ցուցաբերեց ճաշակի բարձրագույն նրբություն եւ աներեւակայելի տեխնիկա: Երիտասարդ դաշնակահարի առանց նոտաների ծավալուն երաժշտական ստեղծագործության կատարումը հիացրել էր դահլիճում ներկաներին: Դաշնակահարի երկրպագուներն այս անգամ եւս հոտնկայս ու երկարատեւ ծափահարում էին:

Միջոցառման անցկացմանը մեծապես նպաստեցին Ջանսուղ Կախիձեի անվան երաժշտական մշակութային կենտրոնի ղեկավարները, ովքեր միշտ պատրաստակամություն են հայտնել, դահլիճ տրամադրել Գերմանիայից պարբերաբար հայրենիք վերադարձող դաշնակահարի համերգներին: Մյունխենում ապրող եւ Մյունխենի երաժշտական բարձրագույն դպրոցում դասավանդող Մամիկոն Նահապետովը հպարտանում է իր մանկավարժներով, Թբիլիսիի կոնսերվատորիայի դասախոսներ Նանա Խուբութիով, Նոդար Գաբունիայով եւ, իհարկե, հանրաճանաչ Էլիսո Վիրսալաձեով:

*ԱՐՏԵՄ ԳՐԻԳՈՐԵՆՑ*

ՏՐԱՆՍՊՈՐՏ

## ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ, ԹԲԻԼԻՍԻԻ ՄԵՏՐՈՆ ԱՇԽԱՏԵԼՈՒ Է 06:00-ԻՑ ՄԻՆՉԵՎ 23:00-Ը

*- Հուլիսի 1-ից, Թբիլիսիում մետրոպոլիտենը աշխատելու է 06:00-ից մինչեւ 23:00-ը,- այս մասին հայտարարել է Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն՝ մայրաքաղաքի կառավարության այսօրվա նիստում:*

Նրա խոսքով, մետրոյում ծանր իրավիճակ է էլեկտրամատակարարման տեսանկյունից եւ անհրաժեշտ է փոխարինել լարերը:

- Մետրոյում առկա իրավիճակը բոլորս գիտենք, բազմիցս խոսել ենք այդ մասին: Մենք սկսել ենք աշխատել վագոնների վերականգնման շուրջ: Բացի այդ, ունենք ծանր իրավիճակ էլեկտրամատակարարման տեսանկյունից եւ Ասիայի զարգացման բանկի աջակցությամբ հատկացված է 15 միլիոն դոլար,- հայտարարել է Կախա Կալաձենն:

Նրա խոսքով, աշխատանքներն ավարտվելու են 2020 թվականի հուլիսին:

ԸՆԿԵՐՈՋ ՀԻՇԱՏԱԿԻՆ

## ԱԼԵՔՍԱՆԴՐ (ԱԼԻԿ) ԱԴԱՄՅԱՆ



82 տարեկան հասակում վախճանվել է ճանաչված շինարար, Վրաստանի վաստակավոր ինժեներ Ալեքսանդր (Ալիկ) Ադամյանը:

Ալեքսանդր Ադամյանը ավարտել է Վրաստանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարության ֆակուլտետը, երկար տարիներ աշխատել շինարարության ոլորտում: Որպես փորձառու մասնագետ եղել է Վրաստանի շինարարության նախարարության արտադրական-տեխնիկական բաժնի աշխատակից, ակտիվորեն մասնակցել Թբիլիսիում իրականացվող շինարարական օբյեկտների նախագծման, կառուցման աշխատանքներին: Գլխավորել է շինարարական «Հատուկշին» տրեստը: 1980 թվականից աշխատել է Վրաստանի կոմկուսի Կենտկոմում, եղել է շինարարության ոլորտում գործերի կառավարչի տեղակալ:

Որպես Վրաստանի քաղաքացի, նվիրյալ, արհեստավարժ, արժանապատվորեն ծառայել է երկրին եւ իր ծննդավայր Թբիլիսիին:

***Մի խումբ ընկերներ***

*«Վրաստան» թերթի խմբագրությունը խոր վշտով ընկալեց Ալեքսանդր Ադամյանի մահը եւ իր ցավակցությունն է հայտնում հանգուցյալի ընտանիքին եւ հարազատներին:*

## ԽԱՉԲԱՌ



**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 6.Խելագար: 8.Դժվարանցանելի ընդարձակ փշատերեւ անտառային գոտի: 10.Թանգարան Փարիզում: 11.Զարմանքի արտահայտություն: 13.Վրաց «Շինարար» թագավոր: 14.Պետություն Արեւելյան Եվրոպայում: 16.Էլեկտրատեխնիկայի ֆիրմա: 17.Թատերական անձնավորում: 18.Թքի բուժիչ քանձր հյութ: 20.Անգլիական ազնվական տիտղոս: 21.Աշակերտ, ուսանող: 22.Ընկճված, հուսալքված: 26.Ավագ քահանա: 28.Կտոր, մաս: 31.Ոչ լայն: 32.Գին, արժեք: 34.Արջուկ «Թուխը»: 35.Բոլշեւիկյան թերթ: 36.Հայ իշխան ... Ամրամ: 38.Նավի խոհարար: 41.Ղավուրմա: 43.Ժողովրդական վրիժառու: 45.Ոտքի ծալվելու տեղը: 48.Ծուռ, թեք: 49.Ժողովրդական թատրոնի եւ գրականության տեսակ XIV-XVI դդ. արեւմտաեվրոպական երկրներում: 52.Սթափ: 53.Մուտք: 54.Դերասանուհի Դեմի ...: 55.Նավակը վարելու գործիք: 56.Արու ոչխար: 57.Վրացու «հորեղբայրը»: 58.Մեքենայի մակնիշ: 59.Կղզային պետություն Ասիայում՝ Հնդկական օվկիանոսում ... Լանկա: 60.Դատարկ, ունայն:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Ձայնային ինֆորմացիայի հաղորդման եւ ընդունման սարք: 2.Դունչ: 3.Գերի, ծառա: 4.Գնահատող հանձնաժողով: 5.Ծխախոտի անուն: 7.Բանաստեղծ, պատմաբան Ղեւոնդ ...: 9.Մարդու օրգան: 12.«Տատիկն ... մի ուլիկ»: 15.Բեմահարթակով փոքր ռեստորան: 19.Սեղանի խաղ: 23.Կռթնելու ծառայող մաս, աթոռի կռնակ: 24.Պատշաճ, ինչպես հարկն է: 25.Հավը՝ տապակած: 27.Թել, զսպանակ: 29.Եվրամիության անդամ երկրների տարադրամը: 30.Ինչպե՞ս: 32.Եկեղեցական անոթ, որի մեջ լցնում են գինի՝ Պատարագի ժամանակ նվիրագործելու համար: 33.Փիլիսոփա, մարքսիզմի հիմնադիր ... Մարքս: 37.Թել մանելու գործիք, ճախարակ: 39.Հասարակական տրանսպորտի սպասատեղ: 40.Գրող, գրականագետ ... Սեւակ: 41.Վարակիչ հիվանդություն: 42.Հեծելազոր: 44.Երկկենցաղ կենդանի: 46.Իսրայելական ինքնաձիգ: 47.Վրաստանում X դարից միջին չափի խեցե սպասք: 50.Տարին 12-ի բաժանող միավոր: 51.Ցուցական դերանուն:

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 1.Կմախք: 4.Փարվանա: 9.Աչք: 11.Կարմիր: 13.Արոր: 14.Նեւա: 15.Պոլկա: 17.Թիակ: 19.Պի: 20.Մարութա: 21.ԱՄՆ: 22.Սեկամ: 25.Արփի: 26.Թունիս: 28.Նոնա: 29.Սի: 30.Մարտ: 32.Օբ: 33.Ապա: 34.Անմար: 35.Այն: 36.Լիմա: 37.Քայլ: 39.Կոստվո: 41.Թաներ: 43.Թռ: 45.Իրիս: 48.Զանգակ: 51.Սիրիա: 52.Ավշար: 53.Ելուստ: 55.Բաս: 57.Արթին: 58.Անապա:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 2.Մարջան: 3.Խպիպ: 4.Փչակ: 5.Աքրա: 6.Վարդան: 7.Նանդու: 8.Ակնթարթ: 10.Կաքավիկ: 12.Ռոպե: 16.Լիկանի: 18.Իմ: 23.Մանանա: 24.Սիփան: 25.Ամարաս: 27.Ուրբաթ: 29.Սալոնիկ: 30.Մաքոք: 31.Տալվորիկ: 34.Ամերիկա: 38.Յոթ: 40.Ղազբեկ: 42.Եր: 44.Կնգուղ: 46.Սեւան: 47.Տիրան: 49.Ախտա: 51.Սաբա: 54.Ուք: 56.Սա:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աբոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445